



2016 թվականի մարտի 10-ին Արայնտիզ մշակութային կենտրոնում (1051 Budapest, Arany János utca 10) տեղի կունենա 1933 թվականին գրված Ֆրանց Վերֆելի՝ համաշխարհային ճանաչում ունեցող «Մուսա Լեռան 40 օրը» գրքի հունգարերեն թարգմանության շնորհանդեսը: Այս աշխատությունը հիմնված է Առաջին Աշխարհամարտի ընթացքում հայերի հերոսական պայքարի վրա, մի ազգ, որը դատապարտված էր աքսորման և բնաջնջման թուրքական մեծ բանակի կողմից: 1355մ. բարձրություն ունեցող Մուսա լեռը դարձավ Հայոց Ցեղասպանության խորհրդանիշը:

Այս գիրքը հրատարակվել է Հայկական Մշակութային Կենտրոնի կողմից 100 օրինակով, որոնցից յուրաքանչյուրի կազմը տարբեր է, և դրանցից յուրաքանչյուրն ունի առանձնահատուկ կարևորություն, քանի որ զարդարված է Մարթայան Էրմոնե Չաբելի՝ ապակու վրա նկարված, բազմազան հայկական մոտիվներով մանրանկարչական նախշերով:

Գիրքը դառնալու է հուշանվեր և բաժանվելու է Հունգարիայի պետական այրերին, Հունգարիայի հայ համայնքին սատար կանգնող բարեխոս հունգարացիներին, համայնապետերին, պետական հաստատություններին և թանգարաններին: